ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի ուղերձը ՀՀ Քննչական կոմիտեի ծառայողի օրվա կապակցությամբ

08.10.2025

Սիրելի՛ Քննչական կոմիտեի աշխատակիցներ,
Սրտանց շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ ՀՀ Քննչական կոմիտեի ծառայողի օրվա կապակցությամբ:
Ձեր առաքելությունը առանձնահատուկ պատասխանատվություն է պահանջում՝ ապահովելու օրինականության և արդարության սկզբունքների պահպանությունը մեր երկրում: Դուք կանգնած եք հասարակության վստահության հիմքում՝ նպաստելով արդարադատության ամրապնդմանը, իրավական պետության կայացմանը և քաղաքացու իրավունքների պաշտպանությանը:
Մեծապես կարևորում եմ Ձեր ամենօրյա բարդ ու պատվաբեր ծառայությունը, որը հաճախ տեղի է ունենում լարված ու պատասխանատու պայմաններում, սակայն Ձեր արհեստավարժությունն ու նվիրումն են, որ ապահովում են քննչական գործընթացների արդյունավետությունը:
Մաղթում եմ ձեզ և ձեր ընտանիքներին առողջություն, արիություն, նոր հաջողություններ ծառայության մեջ և խաղաղություն՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության և նրա քաղաքացու բարօրության: